ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ՄՆ ՄՄԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/84»

ք. Երևան «26» 09 2016 թ.

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ս. Մուրադյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա. Նիկոյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի դահլիճի տանիքի վերանորոգման նախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4)պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 (երեք) օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 189 000 (մեկ հարյուր ութսունինը հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2016թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և սկզբնական նախագծի քսան տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1 Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած

վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները

հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011009777 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում	«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Բյուզանդի 1/3 հեռ.՝ (010) 58-02-91 ՀՎՀՀ 02707077 հ/հ 1660001274300100 «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ
_____ Ս. Մուրադյան (ստորագրություն)	_____ Ա. Նիկոյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1

«26» 09 2016 թ. կնքված

N «ՀՀ ՄՇԻԳ-ԲՀՀԱՇՁԲ-16/84» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի դահլիճի տանիքի վերանորոգման նախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների

1	Կատարման ենթակա աշխատանքների համառոտ բնութագիրը	Կամերային երաժշտության ազգային կենտրոնի շենքի դահլիճի տանիքի հիմնանորոգման, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման շրջանակներում նախատեսվում է վերանորոգել և վերականգնել 39.0x15.5մ հատակագծային չափերով՝ շուրջ 200.0 քմ մակերեսով հարթ տանիքը, (կցվում է սխեմատիկ հատակագիծը): Մասնավորապես, **ճարտարապետահատակագծային լուծումների շրջանակներում նախատեսել՝** պահպանելով նախկինում գոյություն ունեցող տանիքի ձևը վերականգնել ջրահեռացման համակարգը, արդիականացնել տանիքի հետ ներքին կապը: Վերոնշյալ աշխատանքները կատարել չափագրման աշխատանքների և արխիվային նյութերի հիման վրա: **համաշինարարական աշխատանքների շրջանակներում նախատեսել՝** հիմնանորոգման միջոցառումներ՝ ըստ տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացության, ճարտարապետական և կոնստրուկտորական լուծումների, ապամոնտաժել տանիքի չօգտագործվող և խարխուլ տարրերը: Վերականգնել ներքին ջրահեռացման համակարգը՝ փոփոխել ջրատար խողովակները, ջրհորդանները օգտագործել էլեկտրատաքացուցիչներ, ջրամեկուսացման ծածկույթը իրականացնել բարձրորակ դիմացկուն նյութից՝ ապահովել տանիքի անվտանգ շահագործումը:
2	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Հիմնավորում** ՀՀ կառավարության 29 հուլիսի 2016 թվականի N 773-Ն որոշում, տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացություն **Նորմատիվային պահանջներ** ՀՀ կառավարության 10.02.2011թ թիվ 168-Ն որոշում «Գնումների գործընթացի կազմակերպման մասին»: «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշում, ՀՀ Կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման N 8 հավելվածով հաստատված գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի 32-րդ և 34-րդ կետեր:
3	Նախագծման փուլերը	➢ Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում (տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացության հիմքով) ➢ Աշխատանքային նախագիծ՝ «Աշխատանքային փաստաթղթեր»
4	Նախագծի կազմը	**Աշխատանքային նախագծի կազմում՝** ա) էլեկտրային տվյալներ ճարտարապետահատակագծային առաջադրանք,

		տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացություն բ) չափագրություններ, արխիվային նյութեր գ) ընդհանուր բացատրագիր դ) շինարարության կազմակերպման նախագիծ՝ շինարարության տևողության հաշվարկով ե) գլխավոր հատակագիծ, ճարտարապետական և կոնստրուկտորական մաս, ճարտարապետական, շինարարական և մոնտաժային բոլոր աշխատանքային գծագրերը լրիվ կազմով և իրենց տեքստային մասերով, է) լոկալ, օբյեկտային ու ամփոփ նախահաշիվներ:
5	Այլ պահանջներ	➢ Նախագծի համաձայնեցում ՀՀ մշակույթի նախարարության հետ: ➢ Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում օբյեկտի տեխնիկական վիճակի ուսումնասիրության ձեռքբերում: ➢ Նախագծում և Ծավալաթերթում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում: Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում: ➢ Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: ➢ Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 5 օրինակից, էլեկտրոնային և փաստաթղթային տարբերակներով: Աշխատանքների ֆինանսավորումը ապահովել Պատվիրատուի՝ ՀՀ մշակույթի նախարարության պատվիրատվությամբ նախատեսվող նախագծանախահաշվային ***փաստաթղթերի պարզ փորձաքննության*** արդյունքների հիման վրա՝ դրական եզրակացության առկայությամբ:
Աշխատանքի կատարման ժամկետը		
սկիզբը		**ավարտը**
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից		**10.10.2016թ.**

* Կատարողը աշխատանքի արդյունքը մատակարարում է Պատվիրատուի հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք,
հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011009777
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(անուն, ազգանուն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Բյուզանդի 1/3
հեռ.՝ (010) 58-02-91
ՀՎՀՀ 02707077
հ/հ 1660001274300100
«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ

Ա. Նիկոյան
(անուն, ազգանուն)

Կ.Տ.

Հավելված 2

«26» 09 2016 թ. կնքված

N «ՀՀ ՄՆ ՄՇԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/84» ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում				
		սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի դահլիճի տանիքի վերանորոգման նախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	189000	189000	189000	189000	189000

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ մշակույթի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք,
հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78
ՀՎՀՀ 02508054,
հ/հ 900011009777
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչությունում

Ս. Մուրադյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Բյուզանդի 1/3
հեռ.՝ (010) 58-02-91
ՀՎՀՀ 02707077
հ/հ 1660001274300100
«Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ

Է. Նիկոյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3

«26» 09 2016 թ. կնքված

Ն «ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/84» ծածկագրով գնման պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Բյուզանդի 1/3 հեռ.՝ (010) 58-02-91 ՀՎՀՀ 02707077 հ/հ 1660001274300100 «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ	ՀՀ մշակույթի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք, հեռ.՝ (010) 58-51-78, (011) 58-51-78 ՀՎՀՀ 02508054, հ/հ 900011009777 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչությունում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն

ՀԱՆՁՆԱՄՆ-ԸՆԴՈՒՆԱՄՆ

« » _____ 2016 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Պետության կարիքների համար նախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության տրամադրման աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2016 թ.

Պայմանագրի համարը՝ «ՀՀ ՄՆ ՄԾԻԳ-ԲԸՀԱՇՁԲ-16/84»

Պատվիրատուն՝ ի դեմս պատասխանատու ստորաբաժանման ղեկավար Կ. Այվազյանի և Պայմանագրի կողմը՝ ի դեմ «ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ տնօրեն Ա. Նիկոյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2016 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի Ն եզրակացությունն այն մասին որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	Անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքի դահլիճի տանիքի վերանորոգման նախագծային ու նախահաշվային փաստաթղթերի մշակման, փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ	• Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում (տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացության հիմքով) • Աշխատանքային նախագիծ՝ «Աշխատանքային փաստաթղթեր»						

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____ Ա. Նիկոյան ստորագրություն	_____ Կ. Այվազյան ստորագրություն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

«26» 09 2016 թ. կնքված

N «ՀՀ ՄՆ ՄՏԻԳ-ԲԸՀԱԵՁԲ-16/84» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ---- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Գների միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն